ENTERPRISE INCUBATOR FOUNDATION
21/1 Bagrevand St., Yerevan 0062, Republic of Armenia
Phone: +374 11 21-97-97 • +374 11 21-97-87
E-Mail: info@eif.am • http://www.eif-it.com

ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԻՆԿՈՒԲԱՏՈՐ ՀԻՄՆԱԴՐԱՄ
Բագրևանդի 21/1, Երևան 0062, Հայաստանի Հանրապետություն
Հեռ. +374 11 21-97-97 • +374 11 21-97-87
Էլ. փոստ: info@eif.am • http://www.eif-it.com

03.04.2025 ՁԻՀ/Ֆ-39

ՄԵՂՐԻԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ ԽԱՉԱՏՈՒՐ ԱՆԴՐԵԱՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Անդրեասյան,

Սույն նամակով խնդրում ենք առաջիկա ավագանու նիստի ընթացքում քննարկել «Ագարակի համատեղ ստեղծագործական լաբորատորիայի» հիմնադրման և համապատասխան պայմաններով տարածքի տրամադրման հարցը:

Համայնքապետարանից ակնկալվող աջակցություն

1. **Տարածքի տրամադրում**
   Խնդրում ենք անհատույց հատկացնել Ագարակի համայնքապետարանի մասնաշենքի երկրորդ հարկում գտնվող 55.6 քմ մակերեսով տարածքը լաբորատորիայի գործունեության համար (նախատեսվում է, որ հիմնադրվող լաբորատորիան կգործի հիմնադրմանը հաջորդող առնվազն 10 տարվա ընթացքում):

2. **Գործառնականան ծախսերի հոգում**
   2025 թվականի մայիսից հետո՝ շարունակել հոգալ լաբորատորիայի հիմնական կոմունալ և տարածքների սպասարկման ընթացիկ ծախսերը՝ ապահովելով դրա անխափան գործունեությունը:

3. **Համայնքային ներգրավվածություն**
   Խթանել դեռահասների ակտիվ մասնակցությունը համայնքային կյանքին և ապահովել նրանց կապակցումը տեղական և ազգային զարգացման նախաձեռնություններին:

4. **Մուտքի հասանելիություն**
   Երաշխավորել, որ լաբորատորիայի աշխատակիցներն ու երիտասարդները մուտք ունենան տարածք անկախ Ագարակի վարչական շենքի աշխատանքային ժամերից:

Ծրագրի իրականացումն ու աջակցությունը

- **Ծրագրի համակարգում**
  Ծրագրի համակարգման և զարգացման աշխատանքները կիրականացնի «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամը՝ ապահովելով լաբորատորիայի հիմնադրման, առաջնային վերանորոգման, գործունեության և անձնակազմի վերապատրաստման ամբողջական գործընթացը:

- **Կրթական և ձեռնարկատիրական զարգացում**
  Հիմնադրամը կմշակի ձեռնարկատիրության, թվային հմտությունների և տեխնիկական վերապատրաստման ծրագրեր՝ նպաստելով տարածաշրջանի աշխատաշուկայի զարգացմանը: Այն նաև կհետևի ծրագրի արդյունավետությանը և կխթանի համագործակցությունը տեղական բիզնեսների, կրթական հաստատությունների և ոլորտային կազմակերպությունների հետ՝ ապահովելով նորարարական և ձեռնարկատիրական միջավայր:

- **ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցություն**
  ՅՈՒՆԻՍԵՖ-ի հայաստանյան գրասենյակը կաջակցի ծրագրի իրականացմանը՝ համակարգելով շահագրգիռ կողմերի գործողությունները, ապահովելով վերահսկողություն, ֆինանսավորում և փորձի փոխանակում:

Գրասենյակը նաև կաշխատի պետական մարմինների և գործընկերների հետ՝ ծրագրի շարունակականությունն ու երկարաժամկետ ազդեցությունը երաշխավորելու համար: Համոզված ենք, որ այս նախաձեռնությունը կնպաստի համայնքային զարգացմանն ու երիտասարդների կրթական և մասնագիտական աճին:

Կանխավ շնորհակալ ենք Ձեր ուշադրության և աջակցության համար:

Հարգանքով՝

Բ. Ենգիբարյան
Տնօրեն